ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2026 թվականի N 647 - Ն

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. 2026 թվականի հոկտեմբերի 18-30-ը Երևանում կայանալիք՝ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) կողմերի 17-րդ միջազգային համաժողովին (այսուհետ՝ COP17 համաժողով) մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրյա քաղաքացիներին, որոնց համար գործում է վիզային ռեժիմ, ազատել Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա (մինչև 21 օր) տրամադրելու համար նախատեսված պետական տուրքի վճարումից:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը կոնվենցիայի քարտուղարությունից ստացվելուն պես՝ անհապաղ

փոխանցել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ մինչև 2026 թվականի նոյեմբերի 20-ը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնել հաշվետվություն սույն որոշման 1-ին կետում նշված պետական տուրքի չափի մասին:

4. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված հաշվետվությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից այդ հաշվետվության մեջ նշված գումարի չափով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը սույն որոշման 1-ին կետում նշված պետական տուրքի վճարումից ազատված անձանց մուտքի վիզաների համար նախատեսված պետական տուրքի գումարների փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու նպատակով գումար հատկացնելու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

14.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ